

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ — ԲԵՄԱԿԱՆՔ

* Որ. 1 Մարտ.— Նախատօնակը պաշտօնեցաւ Ս. Թորոս եկեղեցիին մէջ, որ Զեռագրատունն է Ս. Աթոռոյս: Հանդիսապետն էր Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արք.:

* Ծր. 2 Մարտ.— Ս. Թեոդորոսի գօրավարին: Ս. Պատարագը մատուցուցաւ Ս. Թորոս եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Նորհան Վրդ. Մանուկեան:

— Կէսօրէ ետք ժամը 3ին, վաղուան Արտաքսման Կիրակիի առթիւ, Ամեն. Պատրիարք Ս. Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտօնեցան երեկոյեան ժամերգութիւնն ու նախատօնակը Ս. Լուսաւորիչ եկեղեցիին մէջ: Ապա կատարուեցաւ տնօրինական արքայտէղիներու այցելութեան հանդիսատր թափօր: Թափօրապետն էր Հոգշ. Տ. Սեւան Վրդ. Ղարիպեան:

* Կիր. 3 Մարտ.— Արտաքսման: Գիշերաշին և առաւօտեան ժամերգութիւնները պաշտօնեցան և Ս. Պատարագը մատուցուցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սևան Վրդ. Ղարիպեան: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ երրադարձ մեծահանդէս թափօր Քրիստոսի Ս. Գերեզմանին և Պատանաւտէղիին շուրջ, գլխաւորութեամբ Ամեն. Պատրիարք Ս. Հօր:

* Դշ. 5 Մարտ.— Երեկոյեան, Ս. Հրեշտակապետաց եկեղեցիին մէջ կատարուած Մեծ Պահոց առաջին «Եկեացէ»ի ժամերգութեան նախագահեց վանքի նոր Տեսուչը՝ Հոգշ. Տ. Վահան Վրդ. Թօփալեան:

* Դշ. 6 Մարտ.— Կէսօրէ առաջ, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Մեծ Պահոց «Ճաշու» առաջին ժամերգութիւնը:

* Եշ. 7 Մարտ.— Երեկոյեան, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուած Մեծ Պահոց «Եկեացէ»ի առաջին ժամերգութեան նախագահեց և քարոզեց Հոգշ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան:

* Ծր. 9 Մարտ.— Ս. Կիրոյի Երուսաղիմայ Հայրապետին: Ս. Պատարագը մատուցուցաւ Մայր Տաճարի աւանդատան մէջ, Ս.

Կիրոյի սեղանին վրայ, որուն տակը ցոյց կը տրուի այն աւագանը՝ որուն մէջ, ըստ աւանդութեան, Ս. Կիրեղ Հայրապետ 351 թուին Ս. Խաչի լուսաւոր երևման առիթով քաղմահաբիր նորադարձներ մկրտած է: Ժամարարն էր Հոգշ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան:

* Կիր. 10 Մարտ.— Անառակին: Ըստ սովորութեան, Ս. Պատարագը մատուցուցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցիին մէջ: Ժամարարն էր վանքի Տեսուչը՝ Հոգշ. Տ. Վահան Վրդ. Թօփալեան: Քարոզեց Հոգշ. Տ. Կիրեղ Ծ. Վրդ. Գաբրիէան, մեկնաբանելով Անառակի անտարանական առակը:

* Եշ. 14 Մարտ.— Իրիկուան Հսկումին ի Ս. Յակոբ նախագահեց Հոգշ. Տ. Կիրեղ Ծ. Վրդ. Գաբրիէան: Քարոզեց Հոգշ. Տ. Վահան Վրդ. Թօփալեան:

* Ծր. 16 Մարտ.— Ս. Յովհաննու Երուսաղիմայ Հայրապետին: Ս. Պատարագը մատուցուցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Նորհան Վրդ. Մանուկեան:

* Կիր. 17 Մարտ.— Տնտեսին: Ս. Պատարագը մատուցուցաւ Մայր Տաճարի Ս. Կարապետի խորանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան:

* Եշ. 21 Մարտ.— Իրիկուան Հսկումին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս:

* Որ. 22 Մարտ.— Վաղուան 40 մանկանց տօնին առիթով, կէսօրէ ետք, Ս. Հրեշտակապետաց եկեղեցիին մէջ կատարուեցաւ «Խաղաղական» ժամերգութիւն, իսկ գիշերապահքին՝ Հսկման արարողութիւն, որուն ընթացքին քարոզեց Հոգշ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան, բնարան ունենալով «Այսօր լինըն Սեբաստիոյ եղև երկրորդ Յորդանան»: Ժողովուրդը իր բարեպաշտական զգացումները արտայայտեց ձէթ նուիրելով և մոմ վառելով:

* Ծր. 23 Մարտ.— Ս. Քառասուն մանկանցըն Սեբաստիոյ: Ս. Պատարագը մատուցուցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վահան Վրդ. Թօփալեան: Վերաբերումը կատարուեցաւ քառասուն մանկանց նկարին առջև շինուած շարժական խորանին վրայէն, որուն դիմաց, կաթսայի մը մէջ կը պլպլային

40 գոյնգոյն կանթեղներ՝ աւանդական ստո-
ցապատ լիճը խորհրդանշող:

— Կէսօրէ ետք ժամը 2.30ին, Ամեն. Պատ-
րիարք Ս. Հօր գլխաւորութեամբ, Միաբա-
նութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս.
Յարութեան Տաճար: Պատանատեղիին, Ս.
Գերեզմանին եւ Գիտ Խաչի այրի ուխտերէն
ետք, վերջնոյս կից՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ
եկեղեցիին մէջ պաշտուեցան ժամերգութիւն
եւ նախատօնակ: Ապա կատարուեցաւ տնօ-
րինական սրբատեղիներու այցելութեան
հանդիսատր թափօր Տաճարէն ներս: Թա-
փօրապետն էր Հոգշ. Տ. Վահան Վրդ. Թօ-
փախեան:

* Կիր. 24 Մարտ.— Դատաւորին: Գիշե-
րային եւ առաւօտեան ժամերգութիւնները
պաշտուեցան ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւո-
րիչ եկեղեցիին մէջ: Ապա, Ամեն. Պատ-
րիարք Ս. Հայրը հանդիսատր Ս. Պատարագ
մատուց Բրիստոսի Ս. Գերեզմանին վրայ,
սպա նախագահեց նոյնին եւ Պատանատե-
ղիին շուրջ կատարուած երրադարձ մեծա-
հանդէս թափօրին, որ վերջացաւ Ս. Գրիգոր
Լուսաւորիչ եկեղեցիին մէջ:

* Որ. 29 Մարտ.— Ս. Գր. Լուսաւորչի վի-
րապամոտի նախատօնակին ի Ս. Յակոբ
նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայ-
րիկ Արքեպիսկոպոս:

* Շբ. 30 Մարտ.— Ս. Հօրն մերոյ Գրիգորի
Լուսաւորչին (Յիշատակ չարչարանաց եւ
մտանելոյն ի վիրապն): Ըստ սովորութեան,
առաւօտեան ժամերգութեան աւարտին Ս.
Լուսաւորչի մատուցը իր հանգստարանէն
թափօրով փոխադրուեցաւ Աւագ Խորան,
ձեռամբ Լուսարարապետ Սրբազան Հօր: Ա-
պա Ս. Պատարագ մատուցուեցաւ եկեղեցիի
աւանդատան մէջ, Ս. Լուսաւորչի սեղանին
վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սեւան Վրդ.
Ղարիպեան:

— Կէսօրէ ետք, Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նա-
գարեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայ-
րեր ինքնաշարժներով քարձրացան Զիթեն-
եաց լեռ, ուր Համբարձման սրբատեղիին վը-
րայ կառուցուած մեր վրանամատարան մէջ
պաշտուեցան ժամերգութիւն եւ նախատօնակ:

— Գիշերասկիզբին, նոյն վայրին մէջ պաշ-
տուեցան «Եկեղեց»ի եւ Հսկման կարգեր եւ
ապա գիշերային ու առաւօտեան ժամերգու-

թիւններ, դարձեալ նախագահութեամբ Հոգշ.
Տ. Գէորգ Վարդապետի: Ս. Պատարագ մա-
տուցուեցաւ Համբարձման մատարան մէջ,
սրբավայրին Տեսուչ՝ Հոգշ. Տ. Մուշեղ Վրդ.
Թաշնեանի կողմէ:

* Կիր. 31 Մարտ.— Գալստեան: Առաւօ-
տուն, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ
Արքեպս. Ապանեանի գլխաւորութեամբ,
Միաբան Հայրեր դարձեալ ինքնաշարժներով
քարձրացան Զիթենեաց լեռ, ուր Համբարձ-
ման սրբատեղիին վրայ կառուցուած մեր վը-
րանամատարան մէջ Ս. Պատարագ մատուց
Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նագարեան, եպիսկո-
պոսական խոր ի գլուխ:

* Գշ. 2 Ապրիլ.— Երեկոյեան, Ս. Հրեշտա-
կապետաց եկեղեցիին մէջ կատարուեցաւ
Մեծ Պահոց վերջին Հսկման արարողութիւնը:

* Դշ. 3 Ապրիլ.— Կէսօրէ առաջ, Մայր
Տաճարին մէջ պաշտուեցաւ Մեծ Պահոց
«Ծաշու» վերջին ժամերգութիւնը:

* Եշ. 4 Ապրիլ.— Երեկոյեան, Մայր Տա-
ճարին մէջ պաշտուեցաւ Մեծ Պահոց վերջին
Հսկման արարողութիւնը:

* Որ. 5 Ապրիլ.— Խ. օր Մեծ Պահոց: Այս-
օր վերջ գտան Մեծ Պահոց կարգերը՝ առա-
ւօտուն Մայր Տաճարին մէջ պաշտուած «Ա-
րեւագաջ»ի հանդիսատր ժամերգութեամբ,
իսկ կէսօրէ ետք՝ «Խաղաղական» ժամեր-
գութեամբ:

* Շբ. 6 Ապրիլ.— Յիշատակ յարութեան
Ղազարո: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի
Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Բա-
կոյր Աթդ. Տատուրեան: Ս. Թարգմանչաց
Մանկապարտէզի աշակերտութիւնը հաղոր-
դուեցաւ:

— Կէսօրէ ետք ժամը 3ին, վաղուան Ծաղ-
կազարդի տօնին առիթով, Միաբանութիւնը՝
Ամեն. Պատրիարք Ս. Հօր գլխաւորութեամբ,
«Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարու-
թեան Տաճար, ուր պաշտուեցան երեկոյեան
ժամերգութիւնն ու նախատօնակը՝ Ս. Լուսա-
ւորիչ եկեղեցիին մէջ: Ապա կատարուեցաւ
տնօրինական սրբատեղիներու այցելութեան
հանդիսատր թափօր: Թափօրապետն էր
Հոգշ. Տ. Հայկասեր Վրդ. Պալլամեան:

* Կիր. 7 Ապրիլ.— ԾԱՂԿԱԶԱՐԴ: Գիշե-
րային եւ առաւօտեան ժամերգութիւնները
պաշտուեցան եւ Ս. Պատարագը մատուցուե-

ցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Մուշեղ Վրդ. Թաշնեան: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ մեծահանդէս թափօր Քրիստոսի Ս. Գերեզմանին եւ Պատանատեղիին շուրջ՝ գլխաւորութեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ապանեանի: Թափօրի ընթացքին կատարուեցաւ նաեւ «Անդաստան»: Թափօրականները ի ձեռին ունէին ձիթենիի եւ արմաւենիի ռստեր, իսկ մեր թափօրին կը հետնէին Ղպտիներու եւ Ասորիներու թափօրները: Վաճք վերադարձին, Միաբանութիւնը «Որ գխորհուրդ քո գալստեան» շարականը երգելով բարձրացաւ Պատրիարքարան:

— Կէսօրէ ետք, շքեղօրէն զարդարուած Մայր Տաճարին մէջ կատարուեցան նախ «Անդաստան», ապա տօնին յատուկ հոգեգմալ շարականներով ընդմիջուած երեկոյեան ժամերգութիւն եւ հոսկ ուրեմն Դոնքացեքի խորհրդաւոր արարողութիւնը, բոլորն ալ նախագահութեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպսկոպոսի: Հոգշ. Տ. Վահան Վրդ. Թօփալեան կոչ ըրաւ ներկաներուն որ մասնակցին Ազունիէի Ազգ. Բուժարանին ի նպաստ կատարուէիք հանգանակութեան եւ կարդաց անուանացանկը «հոգեւոր սիրով եւ փափաքով» փարագոյր բացող հաստացեալներուն:

* Գշ. 9 Ապրիլ.— Աւագ Երեքշաբթի (Յիշատակ տասն կուսանաց): Աննպաստ օդին պատճառաւ, այսօրուան Ս. Պատարագը՝ որ կը մատուցուէր Ս. Յարութեան Տաճարի գաւթին արևելակողմը գտնուող Ս. Յովհաննէս Աւետարանչի հայապատկան մատուոյին մէջ, մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Աստուածածնայ խորանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վահան Վրդ. Թօփալեան: Ս. Թարգմանչաց Վարժարանի Երկրորդական բաժնի եւ Նախակրթարանի երկսեռ աշակերտութիւնը հաղորդուեցաւ:

* Եշ. 11 Ապրիլ.— Աւագ Հինգշաբթի (Յիշատակ Ընթերցաց Տեսուն): Առաւօտեան ժամերգութեան աւարտին՝ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Կարգ ապաշխարողաց»:

— Ժամը 10ին՝ հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցուեցաւ Աւագ Սեղանին վրայ: Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպսկո-

պոս պատարագեց եւ կատարեց ընթերցումը Ս. Բարսեղ Հայրապետի Հաղորդութեան Ժառին:

— «Ռոմայուայ»ի կարգը, կատարուած Մայր Տաճարին մէջ կէսօրէ ետք ժամը 2.30-ին, ձայնաւսիրուեցաւ իսրայէլեան ռատիօկայանէն: Ամեն. Պատրիարք Ս. Հայրը նախագահեց արարողութեան եւ ըրաւ լուսցումը տասներկու Սրբազաններու եւ Հոգշ. Հայրերու ոտքերուն: Փակման Աւետարանէն ետք, Անկիթքաններու Եպիսկոպոսական Տեղապահը անգլերէն լեզուով Ս. Աւետարանը կարդաց: Սոյն արարողութեան, բազմաթիւ հրաշիրեալներու կարգին էին նաեւ Կրօնից նախարարութեան, ներկայացուցիչը՝ Պրն. Շմունէ Թօլեւանց եւ Նահանգաւորին Կառավարիչ՝ Պրն. Ռաֆայէ Լէվի:

— Ժամը 5ին, Հոգշ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեանի գլխաւորութեամբ, փոքր թափօր մը այցելեց Քրիստոսի առաջին բանտը — Ս. Հրեշտակապետաց եկեղեցին: Գաիթին մէջ՝ Ս. Զիթենիի ծառին առջեւ խօսեցաւ Հոգշ. Հայրսուրբը: Թափօրը ապա մեկնեցաւ դէպի Ս. Փրկչի վանքը — Բ. բանտը Քրիստոսի: Հոն եւս Հոգշ. Հայրը խօսեցաւ:

— Գիշերուան ժամը 7-11.30, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Խաւարման կարգ»ը, տխրագոյնցիկ խորհրդաւորութեամբ: Երբ Տաճարը զգեցաւ սուգի խորհրդանիշ խաւարը՝ Հոգշ. Տ. Կիրեղ Ծ. Վրդ. Գաբիկեան կոտ ու ներշնչեալ քարոզով մը վեր հանեց «Լացի գիշեր»ուան փրկարար նշանակութիւնը: Ամեն. Պատրիարք Ս. Հայրը ներկա էր արարողութեան վերջին մասին:

* Որ. 12 Ապրիլ.— Աւագ Որբաթ (Յիշատակ Զարչարանաց, Խաչելութեան եւ Թաղման Տեսուն): Կէսօրէ ետք ժամը 1ին, Ս. Յարութեան Տաճարի Ս. Լուսաւորիչ եկեղեցիին մէջ կատարուեցաւ «Կարգ խաչելութեան», նախագահութեամբ Հոգշ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեանի:

— Կէսօրէ ետք ժամը 4ին, Ամեն. Պատրիարք Ս. Հայրը նախագահեց Մայր Տաճարին մէջ պաշտուած «Թաղման» հանդիսաւոր արարողութեան:

* Եր. 13 Ապրիլ.— Աւագ Ծաբաթ (Ծրագալոյց Ս. Զատիկի): Առաւօտեան ժամը 9.30-ին, փոքր թափօր մը մեկնեցաւ Ս. Յարու-

թեան Տաճար, կատարելու համար Տաճարի դրան քացման ձեռակերպութիւնը, բանալին առնուելով Աւագ Թարգման Հոգշ. Տ. Պարէտ Վրդ. Երէցեանի ձեռքէն:

— Ժամ մը ետք, Ամեն. Պատրիարք Ս. Հայրը ի գլուխ Միաբանութեան մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար: Ս. Գերեզմանի դրան կնքումէն և Յունաց Ս. Գերեզմանին շուրջ կատարուած երրադարձ մեծահանդէս թափօրէն ետք, Յունաց Պատրիարքարանի Գլավտիոս Եպիսկոպոսը և մեր Լուսահանը՝ Հոգշ. Տ. Կիրէղ Ծ. Վրդ. Գաբրիէան, կնիքը քակելով մտան Ս. Գերեզման, ուրկէ հինգ վայրկեան չանցած դուրս պիտի գար նուիրական լոյսը, փոխանցուելով, տեղացի լուսակիրներու կողմէ, ակնթարթի մը մէջ, Ամեն. Պատրիարք Ս. Հօր, որ վերնատան մեր պատշգամբէն կ'օրհնէր Տաճարը լեցնող քաղմագի հաւատացեալները: Տաճարին հայկական և լուսական զանգերու և կոչնակներու խանրագին դողանջին մէջէն ընթացք կ'առնէ մեր թափօրը՝ գլխատրութեամբ Լուսահան վարդապետին, և հետևողութեամբ Ղպտիներու և Ասորիներու թափօրներուն: Երրադարձ այս թափօրը անցաւ առանց միջադէպի, և աւարտեցաւ ժամը 2.30ին: Վանք վերադարձին, Հայ միութիւններու արիները առաջնորդեցին Միաբանութիւնը: Դաթի բերդին դիմաց Պատրիարք և Լուսահան ըզգետատրուեցան և նուիրական լոյսը հետերնին յառաջացան դէպի Մայրավանք, երգելով «Քրիստոս յարեաւ ի մեռելոց», ու մուտք գործեցին Մայր Տաճար, ուր Ամեն. Պատրիարք Ս. Հայրը կարդաց փակման Աւետարանը:

— Ժամ մը չանցած, Մայր Տաճարին մէջ ընթացք կ'առնէ Ծրագալոյցի արարողութիւնը, որուն աւարտին Աւագ Սեղանին վրայ կը մատուցուի իրիկնադէմի խորհրդատր ու լանկուցիչ Ս. Պատարագը: Յարութեան անտիսով կը քացուի վարագոյրը Աւագ Սեղանին, առանել գեղեցկացած վերնատան լուսամուտներէն վրան ինկող մայրամուտի արեգակին վարվոն շառալներով: Ժամարարն էր Հոգշ. Տ. Նորհան Վրդ. Մանուկեան: Ապա Հոգշ. Տ. Կիրէղ Ծ. Վրդ. Գաբրիէան նախագահեց Ս. Զատիկի նախատօնակին: Նոյն շաբաթակնը — «Այսօր յարեաւ» — երգե-

լով Միաբանութիւնը զգետատրեալ բարձրացաւ սեղանատուն՝ ընթրիքի:

* Կիր. 14 Ապրիլ.— ԶԱՏԻԿ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԵՍՈՒՆ ՄԵՐՈՅ: Կէս գիշերէն ետք, ժամը 1.30ին, Մայրավանքի մեծ զանգը ոտքի է հանած արդէն Միաբանութիւնը, որ կէս ժամ ետք լուցեալ լապտերներով կը մեկնի Ս. Յարութեան Տաճար, գլխատրութեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոսի, որ Յունաց արարողութիւններու աւարտին, կը նախագահէ Քրիստոսի Ս. Գերեզմանին և Պատանատեղիին շուրջ կատարուած երրադարձ մեծահանդէս թափօրին: Ղպտիներն ու Ասորիները, թափօր կազմած, կը հետևէին մեր թափօրին: Ս. Գերեզմանի դրան կատարուեցաւ «Անդաստան», կարդացուեցաւ Իդաքերից Աւետարան և երգուեցաւ «Ժաշի քո Քրիստոս»: Ժամը 6.30ին, հանդիսատր Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Գերեզմանին վրայ: Պատարագէ և քարոզէ Հոգշ. Տ. Կիրէղ Ծ. Վրդ. Գաբրիէան՝ եպիսկոպոսական խոյր ի գլուխ: Վանք վերադարձին, «Քրիստոս յարեաւ» շաբաթակնը երգելով Միաբանութիւնը Հայոց Թաղի մուտքէն յառաջացաւ և բարձրացաւ Պատրիարքարան:

— Կէսօրէ ետք, Մայրավանքի մեծ բակին մէջ կատարուեցաւ մեծ «Անդաստան»ը, նախագահութեամբ Ամեն. Պատրիարք Ս. Հօր:

* Բշ. 15 Ապրիլ.— Բ. օր Զատիկի: Յիշատակ մեռելոց: Ամեն. Պատրիարք Ս. Հայրը մատուց օրումն հանդիսատր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ, որմէ ետք, Կենաց Փայտի մատնքն ի ձեռին և ամպհովանիի ներքև նախագահեց Տաճարին մէջ կատարուած երրադարձ մեծահանդէս թափօրին: Հոգշ. Հայրեր, ըստ սովորութեան, բռնած էին սուրբերու մատնքներ: Արարողութեանց աւարտին, Ս. Աթոռոյս շաբաթակնին երգեցողութեամբ, Միաբանութիւն և ժողովուրդ բարձրացան Պատրիարքարան, ուր Ն. Ամենապատուութիւնը Ս. Պատարագի նշխար բաժնեց բոլորին:

* Գշ. 16 Ապրիլ.— Գ. օր Ս. Զատիկի: Ս. Պատարագ մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատուոյն մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան: Հոգշ. Տ. Կիրէղ Ծ. Վրդ. նախագահեց խնդրամատուց

ուխտաւորներու հոգիներուն համար կատարուած հոգեհանգստեան պաշտօնին:

* Ուր. 19 Ապրիլ.— Ս. Կոչի Աւետման հանդիսաւոր նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեան:

* Շր. 20 Ապրիլ.— Աւետումն Ս. Աստուածածնի եւ Գլխատումն Յովհաննոս Կարապետին: Առաւօտուն, Գերշ. Տ. Ծահէ Արքեպիսկոպոսի գլխատրութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժներով մեկնեցան Գերսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրումն հանդիսաւոր Ս. Պատարագը մատուց Գերշ. Հանդիսապետ Սրբազանը:

* Կիր. 21 Ապրիլ.— Նոր Կիրակի (Յիշատակ քիւրաւոր նահատակացն մերոց): Ըստ սովորութեան, Մայր Տաճարի Ասագ Սեղանին վրայ պատարագեց Լուսահանը՝ Հոգշ. Տ. Կիրեղ Ծ. Վրդ. Գաբրիէան, որ քարոզեց նիւթ ունենալով Առաջին Աշխարհամարտի ընթացքին մեր մէկ միլիոնէ աւելի նահատակներուն սրտանմիկ տեղահանութիւնն ու քարոզը, անոնց պատգամը փոխանցելով նոր սերունդին: Ս. Պատարագէն ետք, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոսի նախագահութեամբ կատարուեցաւ հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտօն: Ապա, Լուսարարապետ Ս. Հօր գլխատրութեամբ եւ քաղաքիս բոլոր Հայկական Միութիւններու արիւններուն առաջնորդութեամբ ու բազմաթիւ ծաղկեպսակներով, Միաբանութիւն եւ ժողովորդ ուղղուեցան դէպի Ս. Փրկչի ազգային գերեզմանատունը ու խմբուեցան Արարայի նահատակաց յուշարձանին շուրջ, ուր Հոգշ. Տ. Վահան Վրդ. Թօփալեան, հանգստեան կարգի տարտին, ոգեկոչեց յիշատակը մեր անմեռ նահատակներուն: Յետոյ բոլորն ալ ուղղուեցան Երուսաղէմացի Հայոց Բարեսիրական Միութեան ակումբը՝ սուրճ առնելու:

* Շր. 27 Ապրիլ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան:

— Կէսօրէ ետք, Ամեն. Պատրիարք Ս. Հօր գլխատրութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան երկնայեան ժամեր-

գութիւնն ու նախատօնակը Ս. Լուսատրիչ եկեղեցիին մէջ: Ապա կատարուեցաւ տնօրինական արքատեղիներու այցելութեան հանդիսաւոր թափօր: Թափօրապետն էր Հոգշ. Տ. Բակուր Արդ. Տատուրեան:

* Կիր. 28 Ապրիլ.— Աշխարհամարտան (Կանաչ Կիրակի): Գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, Ս. Լուսատրիչ եկեղեցիին մէջ: Գերշ. Տ. Ծահէ Արքեպս. Աճէմեան մատուց օրումն հանդիսաւոր Ս. Պատարագը Բրիտոսի Ս. Գերեզմանին վրայ եւ ապա նախագահեց արքավայրին առջև կատարուած «Անդաստան»ին: Այսպիսով վերջացան գաղկական շրջանի հանդիսութիւնները Ս. Յարութեան Տաճարէն ներս:

* Շր. 4 Մայիս.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վահան Վրդ. Թօփալեան:

* Կիր. 5 Մայիս.— Կարմիր Կիրակի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսատրիչ եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գեորգ Վրդ. Նազարեան:

* Շր. 11 Մայիս.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սեւան Վրդ. Ղարիպեան:

* Կիր. 12 Մայիս.— Տօն Երևման Ս. Խաչին: Ըստ սովորութեան, առաւօտեան ժամերգութեան տարտին, եւ «Անդաստան»էն առաջ, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կարդացուեցաւ թարգմանութիւնը Ս. Կիրեղ Ա. Երուսաղէմի Հայրապետին՝ 351-ին Ս. Խաչի երևման առիթով Կոստանդ կայսեր քրդած թողութիւն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ասագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Բակուր Արդ. Տատուրեան: Ասագ խորանին վրայ կը տեսնուէր վատ կանթեղներով զարդարուն Ս. Խաչին նշանը:

* Շր. 18 Մայիս.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան:

* Կիր. 19 Մայիս.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսատրիչ եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վահան Վրդ. Թօփալեան:

* Դշ. 22 Մայիս.— Կէսօրէ ետք ժամը 2ին, Գերշ. Տ. Ծահէ Արքեպս. Աճէմեանի գլխատրութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժե-

րով քարձրացան Զիթենեաց լեռ: Համբարձման մատուռի ուխտէն և Հատինաց թափօրէն ետք, սրբավայրին վրայ կառուցուած մեր վերանամատուռին մէջ պաշտուեցան երեկուեան ժամերգութիւն և նախատօնակ: Ապա, Գերշ. Սրբազանը դպրութեան չորս աստիճանները շնորհեց Ամերիկայէն ժամանած եւ Ընծայարանի ուսանող Տրց. Խաչատուր Եղւորզեանի:

— Գիշերակիզքին, նոյն վայրին մէջ կատարուեցան «Եկեղեց»ի եւ Հսկման կարգեր, որոնց յաջորդեցին գիշերային և առաւօտեան ժամերգութիւններ, տեւելով մինչև ժամը 10: Արարողութեանց կը նախագահէր Հոգշ. Տ. Հայկասէր Վրդ. Պայրամեան:

* Եշ. 23 Մայիս.— ՀԱՄԲԱՐԺՈՒՄՆ ՏԵՍՈՐՆ ՄԵՐՈՅ (Վիճակ): Առաւօտեան ժամը 7ին, Գերշ. Տ. Ծափէ Արքեպիսկոպոսի գլխաւորութեամբ, երկուսն նման, Միաբան Հայրեր ինքնաշարժներով քարձրացան Զիթենեաց լեռ ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Համբարձման սրբատեղին, ուր մեր վրանամատուռին մէջ օրուան հանդիսատար Ս. Պատարագը մատուց, Մայր Աթոռոյ Սիւէն Ս. Էջմիածին փոխադրութեան տարեդարձին առթիւ կատարուած 3Հայրապետական Մաղթանք»ին նախագահեց և Համբարձման խորհուրդին շուրջ քարոզեց Գերշ. Հանդիսապետ Սրբազանը: Քարոզի բնաբանն էր Գործք Առաքելոցէն «Եւ եղիշիք ինձ վկայք յերուսաղէմ և յամենայն Հրէաստանի և ի Սամարիա, և մինչև ի ծագս երկրի»: Գերշ. Սրբազանը նախագահեց նաև Ս. Պատարագէն ետք սրբավայրին սուղև կատարուած «Անդաստան»ին:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ եւս «Անդաստան» կատարուեցաւ: Հանդիսապետըն էր Գերշ. Տ. Նորայր Արքեպս. Պողարեան:

* Եթ. 25 Մայիս.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայրավանքի Ս. Համբարձոմ վերանամատուռին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Նորիհան Վրդ. Մանուկեան:

— Բ. Ծաղկազարդի նախատօնակը պաշտուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցիին մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեան:

* Կիր. 26 Մայիս.— Երկրորդ Ծաղկա-

զարդ: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ և Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նազարեան:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Զ

* Բշ. 4 Մարտ.— Պելճիքական նոր Ընդհ. Հիւպատոս Պր. Ալֆրէտ տը Բէօու, իր առաջին այցելութիւնը տուաւ Ամեն. Պատրիարք Ս. Հօր:

* Բշ. 25 Մարտ.— Յունաստանի Անկախութեան տարեդարձի առիթով, Յունաստանի Ընդհ. Հիւպատոս Պրն. Բացիքաքիսի կողմէ Յունական Հիւպատոսարանի մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեան եւ Տիար Կ. Հինդեան:

* Եշ. 4 Ապրիլ.— Ֆրանսայի Նախագահ Ժօրճ Փօմիլիտուի մահուան առթիւ, Հոգշ. Տ. Կիրեղ Ծ. Վրդ. Գաբրիէլեան եւ Տիար Կարպիս Հինդեան Ֆրանսական Հիւպատոսարան երթալով ստորագրեցին ցաւակցական խառնուրտութիւն մէջ:

* Ուր. 5 Ապրիլ.— Հոգշ. Տ. Կիրեղ Ծ. Վրդ. ներկայ գտնուեցաւ Դոմինիկեաններու եկեղեցիին մէջ Ֆրանսայի հանգուցեալ Նախագահին հոգւոյն համար մատուցուած պատարագին եւ հոգեհանգիստին:

* Դշ. 10 Ապրիլ.— Սպանական նոր Հիւպատոս Պր. Սանթիակօ տէ Զուրրուկա Եի Փրագս իր առաջին այցելութիւնը տուաւ Ամեն. Պատրիարք Ս. Հօր:

* Բշ. 15 Ապրիլ.— Կէսօրէ առաջ ժամը 11ին, Ս. Զատիկի տօնին առիթով, Պատրիարքարան շնորհատրութեան եկաւ Կրօնից Նախարարութեան ներկայացուցիչ Պր. Երմոէյ Թօլէտանօ և Քաղաքապետ Վսեմ. Թէտի Քօլլէր: Իսկ Կէսօրին՝ Հապէշաց միաբանութիւնը, գլխաւորութեամբ իրենց եպիսկոպոսին, և Ռումանական եկեղեցիի ներկայացուցիչը:

* Գշ. 16 Ապրիլ.— Կէսօրէ առաջ, Ս. Զատիկի տօնին առիթով, Ամեն. Պատրիարք Ս. Հայրը, ամբողջ Միաբանութեան ընկերակցութեամբ, շնորհատրական այցելու-

թեան գնաց Յունաց Ս. Պատրիարքին, Ֆրանչիսկեանց Գերշ. Կիւսթոտին և Լատինաց Ս. Պատրիարքին: Ապա վանք դառնալով ընդունեց այցելութիւնը հետևեալներուն. Ֆրանչիսկեանց Միաբանութեան՝ գլխաւորութեամբ Կիւսթոտին, Յունաց Միաբանութեան՝ գլխաւորութեամբ Պատր. Փոյս. Գերշ. Ս. Ստեփանոս Եպիսկոպոսին, Անկլիքան Արքեպս.ի Տեղապահին և Արաք Անկլիքաններու Եպիսկոպոսին, Մարոնիք և Հայ Կաթողիկ համայնքի Մեծաւորներուն, Յոյն Կաթողիկներու և Ասորիներու Եպիսկոպոսներուն և Միաբանութեանց, Լուտերականներու և Արաք Լուտերականներու Երէցներուն: Կէսօրին՝ Ամեն. Պատրիարք Ս. Հայրը, ընկերակցութեամբ Հոգշ. Ս. Գեորգ Վրդ.ի և Տիար Կ. Հիւրեանի այցելեց Պապական Գերշ. Նշիւրակին և Անկլիքան Եպիսկոպոսարան:

— Իսկ Գերշ. Ս. Ծահէ Արքեպիսկոպոս, Հոգշ. Հայրերու ընկերակցութեամբ, այցելեց Ասորոց և Հապէշաց Գերշ. Եպիսկոպոսներուն:

* Դշ. 17 Ապրիլ.— Քաղաքիս Հիւպատոսական մարմինը նոյն առիթով այցելեց Պատրիարքարան:

* Գշ. 23 Ապրիլ.— Ս. Աթոռոյս երիտասարդ Միաբաններէն Ս. Աստուածածնայ Տաճարի Տեսուչ Հոգշ. Ս. Մուշեղ Վրդ. Թաշեան մեկնեցաւ Միացեալ Նահանգներ, ըստանձնելու համար հովուութիւնը Օքլէնտի Հայ համայնքին: Իր տեղ Ս. Աստուածածնայ Հաճարի Տեսչութիւնը առժամաբար լսնձնրեցաւ Հոգշ. Ս. Գիւսկ Վրդ. Մուրատեանի:

* Եշ. 25 Ապրիլ.— Իսրայէլի Անկախութեան 26րդ տարեդարձի առթիւ, Կէսօրէ ետք, Քաղաքապետ Վսեմ. Թէտի Քօլլէքի կողմէ Դաթի Բերդին մէջ տրուած ընդունելութեան ներկայ եղան Գերշ. Ս. Ծահէ Արքեպս. Ա. ճեմեան և առժմ. Աւագ Թարգման Հոգշ. Ս. Պարէտ Վրդ. Երէցեան, որոնք նոյն երեկոյ-

եան մասնակցեցան Քնէւէթի մէջ, Արտաքին Գործոց Նախարար Ապպա Էպանի կողմէ նոյն առիթով տրուած ճաշկերոյթին:

* Որ. 26 Ապրիլ.— Ռուսաց Ալէքսանտր Հօտիսի մէջ, Արշիմանտրիք Անթօն Կրապչէի կողմէ տրուած ընդունելութեան ներկայ եղաւ Հոգշ. Ս. Կիրեղ Ծ. Վրդ.:

* Ծք. 18 Ապրիլ.— Կէսօրէ ետք, Դիւանապետ Գերշ. Ս. Ծահէ Արքեպիսկոպոս, ի գլուխ Միաբանութեան, բացուր կատարեց Ս. Թարգմանչաց Երկր. Վարժարանի տարեկան Պագարին:

* Գշ. 21 Մայիս.— Պապական Նոիիրակ Մօնն. Փիօ Լակի, Քաղաքէս պաշտօնով մեկնումին առիթով, հրաժեշտի այցելութեան եկաւ Պատրիարքարան:

* Դշ. 22 Մայիս.— Երեկոյեան, Քաղաքապետ Վսեմ. Թէտի Քօլլէքի կողմէ, ի պատիւ Պապական Նոիիրակին իր բնակարանին մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Դիւանապետ Գերշ. Ս. Ծահէ Արքեպս. և առժմ. Աւագ Թարգման Հոգշ. Ս. Պարէտ Վրդ.:

* Գշ. 28 Մայիս.— Կէսօրէ ետք, Ֆրանչիսկեանց նոր Կիւսթոտ Հայր Մատրիլիոս Աաքի ժամանումին առթիւ, Յոպպէի դրան մօտ ի շարս այլ խարանուանութեանց մեր կողմէ ներկայ եղան Հոգշ. Ս. Պարէտ և Ս. Սեան Վարդապետներ, որոնք ապա երթալով Ֆրանչիսկեանց եկեղեցին, արարողութեան աւարտին մասնակցեցան բարիգալուտի ընդունելութեան:

— Երեկոյեան, Ֆրանչիսկեաններու եկեղեցիին մէջ կատարուած կրօնական համերգ-երգահանդէսին, Լատինաց և Յունաց երգչախումբերուն հետ ժող. Վարժարանի սաները ևս քերին իրենց մասնակցութիւնը, գլխաւորութեամբ Դպրապետ Պրն. Սահակ Գալայճեանի: